

դեռ նոր մեթոդով համարձակ կարելի է ա- սել, որ մեր գործը ապահովված է, չը նայած համեմատաբար չնչին ծախսին, այն է մօտ 25 հազար ռուբլի սկզբից մինչև վերջը:

Սկզբնական գործի համար որոշված է ծախ- սել մօտ 2000 ռուբլի, որի մի մասը պիտի տան բէգերը, որովհետեւ, պ. հաշմանդապետի ասելով, դեռ 1890 թ. հաշմանդապետների խորհուրդը Քիֆլիտում վճել էր, որ բէգերը և արհեստագործներն էլ մասնակցեն մորիսը կոտորելու գործում: Հաշմանդապետների այս վճիռը 1900 թ. վաւերացնում է Կովկասի պ. կառավարչապետը, բայց թէ ինչու մինչև օրս այդ օրէնքը չը գործադրվել, անհասկանալի է:

Գ. Յովսէփեանց

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՆՔԱՅԻՆՈՒՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Հինգշաբթի, յուլիսի 3-ին, առաւօտեան 10 ժամին, կայացաւ Զանգեզուրի հանքա- գործների ժողովի երրորդ նիստը, նախագա- հութեամբ ինժեներ Շվաբլինի և մասնակցու- թեամբ նախկին անդամների, բացակայ էր պ. Ստոպանը, «Равн. Горнопромыш. Товарищество»-ի ներկայացուցիչը:

Նախ կարգադրեց նախկին նիստի արձանա- գրութիւնը, որը ուղղվեց և հաստատվեց Այ- նուհետեւ ժողովը դիմեց ծրագրի III բաժնին և քննութեան անկման նրա 9, 10, 16, 17, 18 և 19-երորդ յօդուածները:

Վերջիններից աւելի վիճաբանութեան ա- ութ տուեցին 10, 16 և 19-երորդ կէտերը: Առաջին կէտը վերաբերում է խորհրդի կազ- մակերպութեան՝ և նրա ուր գտնվում:

Ժողովականների որոշմամբ խորհուրդը բաղ- կացած կը լինի նախագահ-կարգադրից, եր- կու անդամներից, որոնցից մէկը պարտաւո- րական կերպով կը լինի գանձապահ, երկու խորհրդի անդամների տեղապահներից: Քա- րուողը, եթէ իրանց մէջ չը լինի, կարող են հրաւերել և կողմնակի անձնաւորութիւն, ի հարկէ յայտնի վաճառութեամբ: Իսկ ինչ հաւանութեամբ է նախագահի բացակայութեան, այդ դէպքում նրան կը փոխարինէ խորհրդի ոչ գանձապահ անդամը: Փանձապահի համար միանգամայն անյարմար համարեցին այդ պաշ- տօնը, որովհետեւ այդ դէպքում գործերը կա- րող են խնձվել: Խորհրդի անդամի հեռանա- ւով նրան փոխարինում է փոխանդամներից նա, ով որ առաւել ձայներ է ստացել:

Երկար զբաղեցրեց ժողովին այն հարցը, թէ ուր աւելի յարմար է, որ գտնվի խորհուրդը: Եր-

կար վիճաբանութիւնից յետոյ, ձայների մեծա- մասնութեամբ վճռվեց, որ խորհուրդը լինի հանքերում, ուր աւելի յարմարութիւններ կան հսկելու հանքային գործին և ժողովների վճիռ- ների գործադրութեան:

Խորհրդի Քիֆլիտում լինելու մտքին պաշտ- պանները այն տեսակէտն էին առաջ մղում, որ Քիֆլիտը աւելի մօտ է կառավարչական հիմնարկութիւններին և ուրեմն աւելի հեշտ է յարաբերութեան մէջ մտնել հետո: Դը- րան հակառակվեցին միւսները, պատճառաւ- նելով, թէ պէտք է մօտիկ լինել գործին և ոչ թէ հիմնարկութիւններին ու անձնաւորութիւն- ներին և որ այդ անյարմարութիւնը վերացնե- րու համար խորհուրդը կունենայ մի ներկայա- ցուցիչ, ուր որ նա յարմար կը գտնէ: Վերջին 16 և 19 կէտերը վերաբերում են խորհրդի և նախագահի պարտականութիւններին: Նախա- գահի իրաւունքն է ոչ միայն ղեկավարել նիստերը, այլ և կովկասեան հանքային վար- չութեան միջոցով հարկ եղած դէպքում դի- մուսներ անել երկրագործական միջնորդու- թեան և այն հիմնարկութիւններին, որոնք այս կամ այն կերպ կապ ունեն հանքային գործի հետ:

Իսկ խորհրդի պարտականութիւններն են հետեւեալները.

1) Մշակել ընդհանուր ժողովի համար հար- ցեր և ըստ պահանջման կառավարութեան բա- ցատրութիւններ տալ նրա կողմից առաջա- դրած հարցերին:

2) Կազմել առաջիկայ ընդհանուր ժողովի համար բոլոր մասնակցողների ցուցակը, դնե- լով իւրաքանչիւր մասնակցողի դիմաց նրա ամբողջ տարվայ արտադրած պղնձի քանակու- թիւնը և նրա համեմատ տալ մասնակցութեան իրաւունք:

3) Մշակել առաջիկայ ընդհանուր ժողովի պարագայութեան նիւթերը և ընդունել գեկու- ցումներ ժողովին ներկայացնելու համար: Վեր- ջինս կարելի է այն դէպքում ներկայացնել, երբ խորհրդի անդամներից մէկը կը տա իր հաւանութիւնը:

4) Ժողովը և հրատարակել, նոյն իսկ եթէ կարելի է, ամիսը մի անգամ մանրա- մասն տեղեկութիւններ օտարական հում պղն- ձաբերի, հալուածքի և արտահանված պղնձի քանակութեան և նմանապէս պղնձի շուկաների մասին:

5) Հրաւերել արտակարգ ժողովներ, եթէ կարիք կը զգացվի:

6) Վարձել ծառայողներ:

3) Դարձեալ նոյն Վաթթուտի վանքին հրա- շագործ եմկոնանս, որը մի մոզայիքաւ է և կը ներկայացնէ Տիրամայրը Յիսուս մանուկը գրի- կում, և յըջանակը (գլխաւոր) ճիշդ մեր խաչ- քարերուն օրինակը կարծէք, օսկեղծած ար- ծաթէն է, տարբերութեամբ մի օտակայն, որ մեր խաչքարերի վրան դեռ չը հանդիպեցի բարձրաքանդակ մարդկային կամ կենդանու պատկերի:

Բովանդակ քաղաքակիրթ աշխարհի հա- խաւներու և օւսումնականներու կողմից որ- պէս զուտ բիւզանդական հմութիւններ նկատ- ված էր լոյստիւնդ գեղարուեստական մասունք- ներու շարքը դեռ կարելի է շատ երկարել: Բայց, կրկնելով որ նպատակս գիրք մը գրել չէ, շտապում եմ վերջացնել այս գլուխը ա- սելով որ, ով երբ և ինչ տեսել է Ռափէնայի Սան-Վիտալէ եկեղեցւոյն մէջ անվերջութիւն մը նոյնամասն մօտիմէտու, օրհնելու, խոյակ- ներու և այլն, ինչպէս մեր հին տաճարներում, ով այցելել է Կ. Պօլսոյ Այի-Քէօտօքոս եկե- ղեցին, համաւաւոր Քարիշէ Ծամիսին և որս պէս շատ մի ուրիշները, որոնք նախկին բի- ջանդական եկեղեցիներ են, ով մի անգամ կանգ է առել ինքեքի գործակալ Այի-Քէօտօ- քոսի պատերի տակ, մտել Տրապիզոնի Գա- պաճ-Մէլտան հրապարակում վաղուց թուրք մզկիթի վերածված հիւանուրց Այա-Սօֆիան, դարձեալ այդ քաղաքում երբեմն բաղնիսի, երբեմն մզկիթի վերածված տաճարակ ուրիշ հին եկեղեցիներ, ով դիտելու առիթ է ունեցել Սալոնիկում ամենահին IV դարուց մնացած ս. Գէորգը (որը կը յիշեցնէ ճիշդ մեր Լուսա- ւորչի դամբարանը կամ Զուարթնոց եկեղեցին), և Այի-Դէմէտուրն, անհար է, որ չի գալ սա վերջնական համոզման որ, մեր հայկական և կ ղ ղ ց ա կ ա ն ճ ա ր տ ա ր ա պ ե տ ո թ է ան մ Ե ճ ո տ ա ճ Ե Դ, միանգամայն մեր սգոյային հանճարէն (genie) բոլորած մի ոճ չէ: Մի բան միայն ակնհայտ է ճշմարիտ է, որ մեր հայ ա- րուեստագէտները ցեղական բնոյժին բնու- ղակութիւններու շնորհիւ և ուրոյն տեսակի միջավայրի մը պոյմաններու հետեանք ան-

7) Հնդուհել և պահպանել խորհրդի ա- նունով մտած գումարները և նմանապէս հսկել նրանց կանոնաւոր գործադրութեան վրա:

Այս եօթերորդ կէտի առաջին պարբերութիւնը առիթ դարձաւ երկար վիճաբանութեան: Հարցն այն էր, թէ որքան պէտք է թոյլ տալ գանձա- պահին պահելու իր մօտ ծախսերի համար փող: Այսին առաջ ունենալով հանքային շրջա- նում գրամական հիմնարկութիւնների բացա- կալութիւնը և եղածներն էլ շատ հեռու (80 վերստ) գտնվել, մի քանիսը բաւական էին համարում գործադրութեան համար թողնել խորհրդի իրաւասութեան տակ 1500—2000 ռուբլի, ուսմը էլ մինչև 3000 ռ. Ի վերջոյ վճռվեց թողնել խորհրդի բարեհայեցողու- թեան:

Այս կէտը ընկնելիս նկատվեց անվտանգու- թիւն դէպի միմեանց, թէ և դեռ ոչ մի ընտրու- թիւն չէր կատարված: Հետեւեալ նիստը երե- կոյեան կը կայանայ 5 ժամին:

ՆԱՄԱԿ ԱՆԱՊԱՅՈՑ

Յունիսի 28-ին

Թոյլ տուէք ձեռ լրագրի միջոցով մեր հո- գետը իշխանութեան ուշադրութիւնը դարձնել Անապա քաղաքում ապրող հայերի անմիթա- վիճակի վրա: Թէ և բուն քաղաքում կան միայն 25-ի չափ հայ տներ, բայց շրջակայքն էլ հաշ- ւելով՝ այդ թիւը հասնում է 200-ի, մինչդեռ նրանք ունեն միայն մի քանիսն, որը մշտա- պէս ապրում է Կրիմիայայ կոչված գիւղում: Անապայից 60 վերստ հեռավորութեամբ Քա- հանան տարէն 3—4 անգամ գալիս է այստեղ մի քանի օրով, ըստ ժամանակութեան է ա- նում և ճաշակում մի մասնաւոր տան մէջ, որը բնված է այդ առիթով, բայց երբէք չէ կա- րողանում կատարել ամբողջ պատարագը, ո- րովհետեւ եկեղեցական իրերից մինչև անգամ անհրաժեշտները պակասում են: Ոչ Միսդեան և Ջրօնէնքի տօներին, ոչ էլ Զատիկի այստեղի ժողովուրդը պատարագ չէ տեսնում և այդպի- սով տարէց տարի մոռանում է իր տօները: հետզհետէ ստեղծւում է իր եկեղեցուց և կորց- նում է հայութեան վերջին նշանները, իսկ նոր սերունդները մեծանում են կատարեալ տգի- տութեան մէջ: Նրանցից շատերը մեղք են այցելել ուրիշ դաւանութիւններ եկեղեցիներ:

Սարսափելի է լինում մեռաւանդ այստեղի դրութիւնը, երբ մէկը մեռնում է, կամ մի երեխայ է ծնվում, որին անհրաժեշտ է լինում իսկոյն միտել: Քահանային հեռագիր են տա-

խոստալի օրէնքով ունեցել են անհամեմատ աւելի նուրբ ճաշակ, ճախրող ֆանտազիա և մանաւանդ դէպի իրանց զբաղումը խորին ու սրտագին սիրով վերաբերմունք, պարագայ մը որ առաջին և վերջին գրաւականն է, որպէս զի որ և է գեղարուեստական գործ կատա- րեալ լինի *):

Շատ ցաւ է ինձ, որ հնար չունիմ դեռ ներ- կայացնելու մեր հին ճարտարապետների և քանդակագործների անուններ և կենսագրական ծանօթութիւններ, բացի հռչակաւոր Տրապե- ճարտարապետից, որը Անույ մայր եկեղեցին շինողն է կրօնի և Պահլաւունեաց և Խճկոնից կողմերի վանքերը շինող ճարտարապետներու սերունդի մը chef d'ecole-ը եղել (Գեղար- ւեստական ուղղութեան մը գլուխը, առաջին օկտոբր):

Ճարտարապետութիւնից անբաժան քանդա- կագործութիւնը կայ, որը նայած տեղւոյն, շինուածքի զանազան մասերուն ուրոյն պէս- պիտութեամբ հարկաւոր անհրաժեշտութիւն մի կը դառնայ: Հայաստանում իմ կատարած կրկին ուղևորութեան միջոցին հաւաքեցի մօտ 300 մօտիկներ վերին աստիճանի հետաքրքրա- կան և եթէ բազմ ունենամ մի օր իմ հաւա- քածոյն հրատարակելու առանձին յալածով, շատ պիտի կրնան օգտվիլ մեր արուեստագէտներ, թէ հասարակ արհեստագործներ:

Մեր քանդակների բնութիւնը առաւելագէտ, կը ներկայացնէ գծագրատական (dessin lineaire) նրբին, բարդ և բազմամասնական կերպով գեղե-

*) Անհրաւ չը լինելու համար կը յիշեցնեմ նաեւ թէ Հայաստանում դեռ մինչև այսօր կանգուն մնա- ցած տաճարները իրենց տակաւնութեան ուժը և գե- ղեցկութեան երեւոյթ կը պարփն մեծապէս ժամա- նակին հաւաքական խումբերու քանակի կամ առնուա- զը մեծահարուստ իշխանի մը կամ թագաւորի մը քանձարանին և նրա սիրոյն և զուգորդանքին դէպի արուեստագէտ վարպետները: Այս, գեղարուեստ, ալ- օինքն տաղանդ և թշուառութիւն միասին չեն կարող ապրել: Մտաբարական, հոգեկան և անտեսական չա- ւորութիւն եղած տեղը գեղարուեստի բարձր տեսակի արդիւնք չի լինել. մեծ, բարձր գեղարուեստին հար- կաւոր է մեծ և լայն միջոց:

Այս հարցի մասին արդէ մի անգամ:

լիս, որ գայ, բայց պատահում է, որ նա բա- ցակայ է լինում: մինչև նրան գտնուի են, մա- նաւանդ ձմեռը, երկար ժամանակ է տեղում, իսկ մեռելին՝ չը կարողանալով այլ ևս պահել, թաղում են առանց քրիստոնէական ծէար կա- տարելու, իսկ մանուկին թողնում են առանց մկրտութեան: Կարող էք երեւակայել որպիսի ծանր տպաւորութիւն է թողնում ժողովրդի վրա այդպիսի մի դէպք, այն հատարակ ժողո- վրդի, որը ապրում է լի հաւատով: Նրանցից շատերը արտասուք աչքերին պատմում էին ինձ, որ սարսափում են այն մտքից, որ ի- րանց էլ կարող են թաղվել առանց քանանայի:

Անապա քաղաքը Սև ծովի վրա գտնվող մանր քաղաքներից ամենաառողջարար տեղն է հա- մարում թէ իր լաւ կլիմայով և թէ հիմնալի աւազային եղբրքով: Բացի այդ յատկութիւն- ներից, կեանքի պարզութիւնը և ապրուստի համեմատաբար էժանութիւնը գրաւում են այստեղ մեծ քանակութեամբ ումարանոց եկող- ներին մօտակայ և հեռու տեղերից, որոնց թիւում կան և շատ հայեր: Աւելի յարմար չէր լինի արդեօք Անապան դարձնել կենտրոն, քանանային տեղափոխել այստեղ և ժողովարա- րութիւն բանալ մի մասուր շինելու: համար, որը այնքան էլ մեծ ծախս չի պահանջի: Սա հարց ու փորձ արի և տեսնում եմ, որ այս- տեղի ժողովուրդը մեծ պատրաստակալութիւն է ցոյց տալիս աշակերտել այդ գործին, եթէ օկովի ժողովարարութիւն և կարծում եմ, որ ամարանոց եկող հայերն էլ իրանց պարտակա- նութիւնը կը համարեն տալ և իրանց լուսման: Յոյս ունեմ, որ մեր հոգեւոր իշխանութիւնը կիրաւորէ: ժողովրդի այդ ցանկութիւնը, մանաւանդ, որ Անապան ունի ապագայ, որով- հետեւ նաւահանգստի կառուցման հարցը արդէն վճռված է կառավարութիւնից և մի քանի տա- րուց յետոյ շողունաւոր կը մտնեն ուղղակի քաղաքը, դիւրացնելով երթևեկութիւնը: Ար- դէն հիմա էլ երևում են կենդանութեան նշան- ներ, ինչպէս թէ ժողովրդի մաքրվում են և կանխաւոր- վում, շինվում են նոր նոր հիւրանոցներ և լո- դանալու տներ և ամեն տեղ ծառեր են տընկ- վում, չը նայած շատ խեղճ բուսականութեան: Քաղաքը բարեփոխվելով, քանակաբար, կը գրաւէ աւելի մեծ բազմութիւն, որոնց թիւում և հայերին, ուրեմն եկեղեցու կարծք անհրա- ժեշտ կը գտնայ:

Իշխ. Մարիամ Թումանյան

ցիկ թնչութիւններ, որոնք երկրաշտփական քա- նաւայի մը վրա կը պտտին, կը դարձ- դարձին և շնորհալի գաղաբումներով մէջէ-մէջ կանցնին, հանդիսաւոր պար մը բռնելով տա- նիքներու դռները, պատուականներու եղբը- ները էլ չեն ասում իսպի մը շուրջը պաղա- տագին հպումով փարոզ և հոգեբաւոյն աղօթ- քի մը նուիրվող անձնութիւնները նման ու- ղիդ, կոր և բեկ-բեկ գիծերու օրտաչարժու- թիւնը, ինչպէս և գլխի մը ամանիքին օրտա վէտվէտող տկաններու շնորհալի շարքը, որոնք շինող վարպետները ուղեցել են, որ սրանք անպատճառ մի մի թագ լինեն իրենց գործոյն նուիրաբերված (ի փառս Աստուծոյ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն):

Քանդակագործութեան մասին դեռ ևս պիտի խօսիմ ուրիշ տեղ մը: Այստեղ վերջանում եմ խօսքս յիշատակելով սա պարագային, որ, մեր ճարտարապետական հին մնացորդներում խիտ հազուադէպ է պատահել մարդկանց, կենդա- նիւնների, ինչպէս նաեւ անշունչ բնութեան պա- կեղներ ներկայացնող քանդակների և դրանք այն աստիճան լավ ու խայտառակ, որ ճշմա- րիտ ցաւ է հզուր մարդ, մտածելով որ Ծախ- մայրում գուցէ աւելի լաւ են քանդակում այդ մի և նոյն բնութեան առարկաները, Բայց ևս այս հարցի առիթով դեռ խօսք ունիմ, համբե- րեցէք: Ճարտարապետութեան մասին այն գլու- խը չի վերջացուցած հարկ է մի բան ևս յի- շեցնեմ, որ յոյններ հետ մեր գիտնական եղ- բայրակցութեան շնորհիւ կրած ազդեցութիւնը երբեմն յաղթահարված է տեղ-տեղ արաբների ազդեցութիւնով, որոնց հետ ունեցած մեր բուն յարաբերութիւնները անհետեանք չեն մնացել մեր գեղարուեստների վրա և Հայաս- տանում տեղ-տեղ կան այնպիսի նմաններ գա- նազան քանդակների, որոնք Բաղդադէն եկել են մեզ մօտ: Օրինակ, Սոչափանի վիհարանին սթալաքթիթ ձեղունը, ինչպէս Հաղապառ- քանդակաւորան ասորին մօտ վերին անկիւն- ների շնորհատաշ անկիւնադանդերը և այլն:

Ա. Տեթվաճեան

1) Մ ա կ ե դ օ ն ի ա յ ու մ. Մօստ-Աթօսի Լա- ուռա վանքին: Սուրբ Աղբիւրին շրջեցեքքին մասը կազմող մարմարէ քարին քանդակները լիովին Հայաստանում տեսնված:

2) Նոյն Մօստ-Աթօսի Վաթթուտի վանքում: Տ-դ դարու ձեռագիր աւետարանի մը մէջ գրը- խաղի նկարի մը օրինակը, որը շինված է ճիշդ այն առաջնով, որով գլխազարդված են մեր գրչագիրներից շատ շատերը:

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԳՐՈՒԹԵԱՆ

Բազում, յունիսի 30-ին

Յարգելի «Մշակ» միջոցով յայտնում եմ իմ և որդիներս խորին շնորհակալութիւնը իմ հանգուցեալ ամուսին Աստուածատուր Կառնիկ-ճեանի ընկերներին և բարեկամներին, որոնք յունիսի 29-ին, կիրակի օրը, իրանց հաշտով մահաբժան կանգնեցրին նրա գերեզմանի վրա: Դարձեալ խնդրում եմ ընդունել մեր խորին շնորհակալութիւնը այն անձանց, որոնք իրանց ներկայութեամբ յարգեցին ամուսնուս յիշատակը մահաբժանի բացման օրը:

Թամար Կառնիկ-ճեան և որդիք

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՏԻՆ

Մենք ստացանք Սրեանի երկտասարդութիւնից հետեւեալ հետազոտութիւնը: «Չենք կարող չարտադրել մեր խորին վիշտը մեծ յարգանքով արժանի ըմբիկ Տատեանի մահվան առիթով, որ իր տեսող եղած ժամանակ Սրեանի թեմական դպրոցում մաքառում էր ազիտութեան և խաւարամիտ հոգեմտութեան գէմը»:

Մեզ հաղորդում են, որ Մեծ-Ղարաբաղի մայր շրջանում գործող չրիկ կաթնարանը այժմ գտնվում է գիւղական «Սանամ-Սուրբ-դան» կոչված սարում, ուր դիւղացիները ներկայումս պահում են իրանց կթան անասուններին: Այնտեղ ամեն օր կանոնաւոր գործում է սերգատող մեքենան, բաժանելով սերը կաթից: Կաթնարանը այնտեղ կը գործէ մի 8—4 շաբաթ:

Չորեքշաբթի, յունիսի 2-ին, Աղէլիսանեանի կաշու գործարանի բանուորներից մէկը սպանութեան փորձ կատարեց այդ գործարանի կառավարիչ Ի. Մարկոսեանի կեանքի դէմ, երբ վերջինս կանգնած գործարանի գաւթում խօսակցում էր ծառայողներից մէկի հետ: Սպանութեան փորձ անող բանուորը ատրճանակն արձակեց երեք անգամ և վիրաւորեց Մարկոսեանի աջ ձեռքը և ուսը: Սրբ Մարկոսեանի խօսակցից Յարութիւնեան կամեցաւ ընկնել լանդարէն, վերջինս մի անգամ էլ արձակեց ատրճանակը և վիրաւորեց Յարութիւնեանի ոտը: Դրանից յետոյ նա զինաթափ արվեց և ձերբակալվեց: Բանուորի ասելով, գործարանի կառավարիչ Մարկոսեան իբր թէ կոպիտ էր վարվում բանուորների հետ:

Ներքին գործերի մինիստրութիւնը դիմեց մի շրջաբերականով նահանգապետներին, որպէս զի վերջիններս առաջարկեցին նահանգական և դաւառական ազնուականութեան պարզութիւններին՝ հող տանել կազմելու առանձին մասնաժողովներ անդրի դաշտերի ոռոգման և ճանիւների չորացման հարցերը մանրամասնորէն քննելու համար:

Թիֆլիսի նահանգապետը հաստատեց մեր վաճառման համար նոր սակագին, որի համաձայն մեր առաջին տեսակի ֆունտը Թիֆլիսում պէտք է վաճառվի 11 կոպէկով, երկրորդ տեսակի ֆունտը՝ 8 կոպէկով և երրորդ տեսակի ֆունտը՝ 6 կոպէկով:

Այս տարվայ նոյեմբեր ամսին Պետերբուրգում կը բացվի մետաղեայ և քարեայ կերտաւածքների միջազգային առաջին գեղարուեստական-արդիւնաբերական ցուցահանդէս, որի նպատակն է ցոյց տալ, թէ ինչ աստիճանի զարգացման է հասել ներկայումս գեղարուեստական իրերի պատրաստութիւնը Ռուսաստանում և արտասահմանում: Կազմակերպող մասնաժողովին անդամ նշանակված է Վ. Կովալեւսկի: Ցուցահանդէսը կունենայ երեք մեծ բաժանմունքներ — ուսական, արտասահմանեան և արեւելեան:

«Էրա» լրագրի ասելով, պետական խորհրդին ջնջութեան ներկայացրած է մի նախագիծ, որով բոլորովին վերացված է «բողոք» կոչված մարմնական պատիժը:

Թիֆլիսում անդեկոթիւն է ստացված, որ «Կապա» լրագրին Պետերբուրգից հաղորդված հեռագրական լուրը, թէ «С.-П. Вѣдомости» լրագիրը անցնում է Վերիլայի ձեռքը, սխալ է: Լրագրի խմբագիր կը զանաւորու ընտանեկան Սլուչիւսկի, որը մի ժամանակ խմբագրում էր «Правит. Вѣстник» լրագիրը:

«Կապա» լրագրին հետազոտում են Պետերբուրգից, որ հրատարակված է կարգադրութիւն, որով թոյլ է արվում վերադարձնել:

Բուլթայիսի նահանգի ազնուականութեան այն գումարները, որ նա տուել է Միքայէլեան կաթնածական բանկին, որպէս բաժնետիրական դրամադուլ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

«НОВОЕ ВРЕМЯ» լրագրի Հոսի թղթակիցը գրում է. «Պապի հիւանդութեան մասին առաջին պաշտօնական թելուղծը լոյս տեսնուեց յետոյ, որը սակայն ոչինչ վտանգ չէր ազդարարում, կէսօրին լուր տարածվեց պապի մահվան մասին, որը յամառութեամբ կրկնվում էր մի ժամ շարունակ մինչև երկրորդ թելուղծին լոյս տեսնելը: Ամբողջ Հոսի օրը վրա էր երէկ, յունիսի 27-ին, և Վատիկանին անդադար մօտենում էին հասարակութեամբ լցված կառքեր, և մինչև ուշ գիշերը խուռն ամբողջ չէր հեռանում Վատիկանի դռներից: Մինչդեռ ինքն՝ հռչակաւոր հիւանդը, պահպանելով ոգու և գիտակցութեան ներկայութիւնը, չը նայելով իր չափազանց թուլութեանը, դեռ աշխատում էր առաւօտից, կարգադրութիւններ անելով: Նա անկողնում պառկած չէ, այլ նստած է թաղկաթնով վրա իր սովորական սպիտակ ֆլանէլի ուսուսմանը: Նրա հիւանդութիւնը դժուար է ձեռնարկել: Նա հանգչում է, քաղէ առ քաղէ թուլանալով: Նա ոչ տաքութիւն ունի, ոչ հոգ, թէպէտ հիւանդութիւնը թոքային բնաւորութիւն ունի: Բժիշկները տուփը ձեռքին, ժպտուն և հանգիստ, կատարելապէս հասկանալով իր դրութիւնը, նա պատրաստվում է անցնել այն աշխարհը, չը դադարելով աղօթքներ կարդալուց: Շրջապատողներին ապշեցնում է այն եռանդը, որով պապը կուռն է մահվան դէմ: Թուլութեան ժամերին, կամեցելով յաղթանալ նրան, նա մի մի անգամ վեր է կենում և անցուցարձ է անում սենեակում և նրա աչքերում դեռ փայլում է զօրեղ կամքը, կեանքի վերջին կայծը: Այն գիտեմ, տառն է նա Լապալոնի բժշկին, որ մօտ է իմ վախճանը, բայց ես կամենում եմ մեռնել օտոյ վրա, սուրբ Հաղորդութիւնը ընդունելով և խօսակցելով իմ կարգիւններին հետ»:

Պապի մահը վաւերացնելու ծէսը: Այդ հոսից սահմանված ծէսը կատարվում է հետեւեալ կերպով:

Երբ Պապը արձակում է վերջին շունչը, կարգիւններից մէկը արձակել փորձի մուրճով երեք անգամ զարկում է Հոսի հանգուցեալ քահանայապետի գլխին և երեք անգամ կանչում է նրան նրա մկրտութեան անունով: Ապա, պատասխան չը ստանալով այդ կանչոցներին, կարգիւնը դիմում է ներկայ եղողներին և բացականչում է.

— Il papa è realmente morto (պապը իսկապէս մեռել է):

Հոսի բոլոր զանգակաւորները սկսում են թաղման զանգարութիւնը, տեղեկացնելով Յաւիտեանական քաղաքի ազգաբնակչութեանը պապի մահվան լուրը:

Պապի մարմինը զմոտում են, զգեստաւորում են քահանայապետական սպիտակ և ծիրանեզոյն հանդիւսաւոր զգեստով և հանդէս են դրնում Սիքստեան մատուռում կարմիր ոսկեկար գրպակի մահճի վրա, շրջապատված վառված մոմերով:

Պապի խոստովանալիքները երեք օր շարունակ հոգեհանգիստներ են կատարում և աղօթքներ են կարդում հանգուցեալ պապի մարմնի վրա:

Չորեքրդ օրը մարմինը փոխադրվում է ս. Պետրոսի տաճարը Եւլաբիտի մատուռը և դրվում է բարձրութեան վրա այն կերպ, որպէս զի ոտները, որոնք դուրս են գալիս մատուռի վանդակապատից, կարողանան հաւատացեալները համբուրել: Կանգուցեալ քահանայապետին վերջին հրաժեշտը տալու ժամանակ:

Ապագայ պապի ազգութիւնը: «Berliner Tageblatt» լրագրի Հոսի թղթակիցը հաւատացնում է, որ թէ իտալական և թէ այլ երկիրների բոլոր կարգիւնները մի բանի մէջ կատարելապէս համաձայն են, որ նոր պապը պէտք է իտալացի լինի: Եւ հայ թէ ինչ պատճառներով:

1) Հռոմէական կուրիան, ինչպէս ցոյց է տալիս արդէն նրա անունը, հին հռոմէական հիմնարկութիւն է: Ոչ-իտալացի պապը չէր կարողանալ զուրկ հանել վատիկանեան վարչութեան բարդ խառնափնթորութեան մէջ, չէր կարողա-

նայ մինչև անգամ լեզուին տիրապետել այնքան, որ կարողանար իսկական տէր և հրամանատար լինել: Լեոն պապի վրա եւ ծուռ էին նայում իր ժամանակ այն բանի համար, որ նա Պէրուշիից Հոսի փոխադրեց հինգ մարդ իր կողմնակիցներից: Ինչի նման կը լինէր, եթէ օտար ազգութեան պատկանող պապը ուզենար շրջապատել իրան Հոսիին օտար տարրերով:

2) Աւանդութիւնների դէմ մի այդ տեսակ ընթացք (այսինքն օտարազգի պապ: ընտրութիւնը) դժբաղդութիւն կը լինէր թէ քաղաքական, թէ բարոյական և թէ կրօնական տեսակետից, որովհետեւ խիստ չիտրութիւն կառաջացնէր բոլոր կաթօլիկ երկիրներում: Քրանս-սիացիները չէին տանի գերմանացի պապին, և հակառակը:

3) Միայն իտալացի պապը կարող էր պահպանել պապութեան անաւանելի դրութեան ֆիկցիան, այնպէս ձեռնարկեցեալ պետութեան վերականգնման և «հոլային անկախութեան» վրա: Եթէ ոչ-իտալացիին ձեռք մեկնէր ս. Պետրոսի գահից դէպի իտալական երկիրները, պապական գահի քաղաքական դրութեանը մեծ վտանգ կը սպառնար կառավարութեան կողմից:

4) Օտարազգի կարգիւններին մէջ, Լապիժէ-րի մահից յետոյ, չը կայ ոչ մէկը, որը արժանի լինէր Լեոն XIII-ի յաջորդ լինելու:

5) Եթէ մի այդպիսի յիշար միտք ծագէր էլ օտար շրջաններում, իտալական կարգիւնները անբող լուծով կը դիմադրէին նրա իրազեկմանը: Ուրեմն, հէնց երեքեզու չափի տեսակետից, պապը պէտք է իտալացի լինի:

Պապի ընտրութեան եղանակը: Հին, շատ դարեր գոյութիւն ունեցող ծէսի համաձայն, տեսներդ օրը պապի վախճանից յետոյ, Հոսի ս. Պետրոսի և Պօղոսի տաճարում պարտաւոր են հաւաքվել թէ Հոսիում ապրող և թէ ուրիշ երկիրներից եկած կարգիւնները: «De Sancto Spiritu» պատարագից և թափօրից յետոյ Սիկստեան մատուռում, կարգիւնները եղում են տալիս, որ կը հետեն, պապի ընտրութեան համար օսմանման կանոններին: Ապա կարգիւնները կերթան նրանցից իւրաքանչիւրի համար վատիկանում յատկապէս պատրաստած խուցը: Բոլոր մուտքերը այն շինութեան մէջ, ուր գտնվում են խուցերը, փակվում են, և անմտելի են դառնում կարգիւնները մինչև նոր պապի ընտրութիւնը: Իւրաքանչիւր խուցի դռները փակվում են կրկնակի փականքներով: Առհասարակ, ամեն միջոցներ ձեռք են առնվում, որպէս զի կօնկալվում գումարված կարգիւնները մինչև ընտրութիւնների վերջը կարված լինեն արտաքին աշխարհից և նրա ազդեցութիւններից: Նամակների և հեռագրի ներքի բերելը ընդհատվում է, նոյնպէս և ամեն տեսակ բանակցութիւնները կարգիւնների մէջ: Իրանց ժամանակաւոր խուցերում առանձնահատուկ յետոյ երրորդ օրը, առաւօտեան 7 ժամին, արարողապետի տուած նշանով, կարգիւնները կերթան յատկապէս այդ նպատակի համար սարքված մատուռը և նրանցից իւրաքանչիւրը կը յանձնէ տոմակ իր թեկնածուի անունով: Եթէ թեկնածուն չը ստանայ ձայների պահանջը թիւը (ամենապակասը, ընդհանուր թիւի երեք քառորդը), այն ժամանակ ընտրութիւնները յետաձգվում են հետեւեալ օրվայ: Սակայն հետեւեալ օրը ձայներ կարող են տրվել միայն այն թեկնածուներին, որոնց ազգանունները կային թեկնածուների թիւի մէջ: Եւ ամեն ձայնատուութեան ժամանակ, այսինքն, որոնք մտնել են այդպէս անուանված Scrutinium-ի մէջ, այդպիսով կարգիւններից ոչ ոք իրաւունք չունի երկրորդ անգամ ձայն տալ այն թեկնածուին, որին նա ձայն էր տուել առաջին ընտրութիւնների ժամանակ: Եթէ երկրորդ ձայնատուութեան ժամանակն ևս թեկնածուն չը ստանայ բոլոր ձայների 3/4-ը, այն ժամանակ ընտրութիւնները յետաձգվում են կրկին հետեւեալ օրվան: Այդպիսով ընտրութիւնները կարող են տևել 10 և աւելի օրեր, մասնաւոր թէ կարգիւնները չեն կարողացել առաջուց պայմանաւորվել:

Ընտրութիւնների ամբողջ ժամանակ իւրաքանչիւր կարգիւնալի տրամադրութեան տակ են արարողապետը և ծառան, կարգիւնների համար կերակուր պատրաստվում է կօնկալի փակված բնակարանի մէջ և այնտեղ գտնվող ոչ մէկ անձն չէ կարող դուրս գալ իր բնակարանի սահմաններից:

Երբ վերջապէս կարգիւնները վճիռ կը կայացնեն նոր պապի ընտրութեան վերաբերմամբ, նրանք կրկին կը հաւաքվեն Սիքստեան մատուռի մէջ, ուր պապ ընտրված կարգիւնը կը յայտնէ, թէ ինչ անուն նա զիտաւորու-

թիւն ունի կրել և շնորհաւորութիւններ կընդունի իր նախկին ընկերակիցներից:

Դրանից յետոյ արարողապետը նշան կը տալ որ կօնկալվը վերջացած է, և հանդիսաւոր կերպով կը յայտնէ ժողովրդին:

— Պապ ունենալ:

Մօսկվիթի Վոյպիմի: Մօսկվիթի Վոյպիմի, որը մեծնող պապից կօնկալութեան քարտուղար էր նշանակված, ինչպէս տեղեկացնում է հեռագիրը, կաթոսածանար եղաւ: Այդ լուրը առաջիկայ կօնկալի համար մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ կօնկալութեան քարտուղարի պարտաւորութիւնն է կառավարել կաթօլիկ եկեղեցին պապի ընտրութեան ժամանակ: Մօսկվիթի Վոյպիմի յայտնի էր վատիկանեան շրջաններում որպէս Լեոն XIII պապին շատ մօտ անձն, որը շատ լուս գիտէր պապի բոլոր նախագծերը և ցանկութիւնները:

Պապի երկարակեցութեան բացատրութիւնը: 93 տարեկան պապի ֆիզիքական ոյժը, որը այդպէս երկար կուռն է մահվան դէմ, ընդհանուր գործունէ է պատճառաւոր, եթէ պապը հասաւ այդ զոտաւանալ հասակին, անհապանելով իր զօրեղ խելքի բոլոր ոյժերը, դա բացատրվում է, պապի սեփական խօսքերով, նրանով, որ պապը կարողանում էր միշտ հանգիստ մնալ:

— Եթէ ես այսպէս երկար եմ ապրում, — ասեց մի անգամ պապը մասնաւոր խօսակցութեան ժամանակ Ֆրանսիական մի դիպլոմատի, — դա այն պատճառով է, որ ես երբեք կեանքումս չէի յուզվում, բոլոր ուրախութիւններին և ձախորդութիւններին վերաբերվում էի հանգիստ, երբեք ոչ մէկի վրա չէի բարկանում և միշտ որոնում էի և գտնում հանգստութիւն աղօթքի մէջ: Դրանով է բացատրվում, — ասեց պապը, — անհասարակ ֆիզիքական տեսակետից կաթօլիկ հոգեւորականութեան երկարակեցութիւնը համեմատած ուրիշ ինտելիգենտ պրօֆեսորների հետ: Ես համոզված եմ, որ եթէ ուրիշ մարդիկ աշխատէին հետեւի մեր օրինակին, չատերը նրանցից, որոնք մեռնում են կեանքի ծաղիկ հասակում կամ աշխատանքի անընդունակ են դառնում 50 կամ 60 տարեկան հասակում, կապրէին մինչև 80—90 տարին և նոյնքան ժիւր կը լինէին այդ հասակում, ինչպէս ես և շատ ուրիշ կաթօլիկ քահանաներ:

Թիրաւի, պապի հանգստութիւնը և զգաւորութիւնը կեանքի ամեն դէպքերում — ապշեցնող են: Նա կէս դարից աւելի քահանայական պաշտօնի մէջ գտնված ժամանակ երբեք չէ յուզվել, երբեք չէ բարկացել — գոնէ ոչ ոք չէ տեսել նրան բարկացած կամ յուզված:

Պապի երկար և անոյգ կեանքի մէկ ուրիշ պատճառը չափաւորութիւնն է ուտելու մէջ: Կաթօլիկ հոգեւորականութիւնը հուշակված է նրանով, որ նա սիրում է և գիտէ լուս ուտել Լեոն XIII պապը այդ կողմից խիստ կերպով զանազանվում էր կաթօլիկ ուրիշ հոգեւորականներից: Նա շատ սակաւ էր ուտում և շատ համեստ: Շատ տարիների ընթացքում պապը կարողանում էր կերակրվել օրական երկու երեք ձուով, մի փոքրիկ աման բուլիօնով, վառիկի մի թեւով աման ձկան մի փոքր կտորով և բանջարեղէնի փոքր քանակութեամբ: Այդ բոլորի վրա խում էր մի փոքր բաժակ սպիտակ գինի: Այդպէս էր կերակրվում պապը ամիսներ, տարիներ, դարմանք պատճառելով շրջապատողներին:

— Չը պէտք է ստիպել ստամոքսը խիստ շատ աշխատել, որովհետեւ դա յոգնեցնում է ուղեղը, — ասում էր պապը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՏԻՆ

— Անգլիական մամուլը օգնորված յօդուածներ է նուիրում Յրանսիային և նախադաս Լուսիին: Այն այդեղութեան առիթով, որ վերջինը մօտ օրերումս տուեց Անգլիային: Լրագիրները, առանց խտրութեան, յոյս են յայտնում, որ այդ այցելութիւնը կամրացնէ բարեկամական կապերը երկու պետութիւնների մէջ, որոնք քաղաքական և քաղաքացիական ազատութեան ամենապիտան անդամներն են: Եւ ներգործական: Տասնիններորդ դարում Յրանսիան սկիզբ դրեց դէմօկրատիական մեծ շարժման եւրոպայում, և այժմ Անգլիան ու Յրանսիան իրանց ձեռքն են առել ազատամարտութեան գործը, որը իսկապէս ազատութեան գործ է ամբողջ աշխարհի համար: Տարածաշրջաններն ու պատերազմը երկու ցամաքային պետութիւնների մէջ, որոնք էլ որ լի-

Электронпечатня Груз. Кад. Т-на, В.Ваншная ул.